

ՀՀ Սահմանադրության որոշ պրոբլեմային դրույթների առնչությամբ

Հովհաննիսյան Հ. Հ.

գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու,

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս (Երևան, Հայաստան)

hayk.hovhannisyan79@gmail.com

Վճռորոշ բառեր` Սահմանադրություն, պաշտպանություն, անվտանգություն, զինված ուժեր

О некоторых проблемных положениях Конституции РА

Оганесян Г. О.

Кандидат военных наук, полковник, старший преподаватель Центра исследований стратегического руководства и управления НОИУ МО РА,

Национальный оборонно-исследовательский университет МО РА (Ереван, Армения)

hayk.hovhannisyan79@gmail.com

Аннотация. Данный анализ конституционных реформ показывает, что для Республики Армения современная парламентская система правления не оправдывает себя, так-как не способствует реальному разведению законодательной, исполнительной и судебной властей, следовательно и строительству правового государства, а также имеет отрицательное воздействие на уровень обеспечения обороноспособности и военной безопасности.

Ключевые слова. Конституция, оборона, безопасность, вооруженные силы.

Some Controversial Provisions Regarding the RA Constitution

Hovhannisyan H. H.

PhD in Military Science, Col, Senior Lecturer, Center for Research on Strategic Leadership and Management, NDRU, MOD, RA,

National Defense Research University, MOD, RA (Erevan, Armenia)

hayk.hovhannisyan79@gmail.com

Abstract. Given analysis of constitutional reforms shows that the modern parliamentary system of government does not justify itself for the Republic of Armenia, since it does not contribute to the concrete separation of the legislative, executive and judicial powers, consequently establishment of a constitutional State, besides, it has a negative impact on the level of ensuring defense and military security.

Key words. Constitution, defense, security, armed forces.

Յուրաքանչյուր հասարակություն իրավական պետություն կառուցելիս չի կարող հաջողության հասնել առանց Հիմնական օրենք ընդունելու, որից և բխում են պետության ոլորտային օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը: Պետությունների գերակշռող մասում այդ հիմնական օրենքը Սահմանադրությունն է՝ պետության կազմակերպման քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական հիմքերի ամրագրումը [1]: Մյուսը երկու առաջնային խնդիրներ են, որոնք կազմում են ժամանակակից սահմանադրությունների հիմնաքարը:

Ի տարբերություն սովորական օրենքներից և այլ նորմատիվ իրավական ակտերից՝ սահմանադրություններն ստեղծվում են տասնամյակների ու հարյուրամյակների համար արտացոլելով տվյալ հասարակության ու պետության փոխհարաբերությունները, պետական իշխանության ու կառավարման համակարգը:

Օրինակ՝ ԱՄՆ-ի Սահմանադրությունը, որն ընդունվել է 1787 թ. [2] և մինչ այժմ ենթարկվել է աննշան փոփոխությունների, կամ, նույն տարբերակով, Գերմանիայի Դաշնության Սահմանադրությունը՝ 1949 թ. հետո էական փոփոխության է ենթարկվել միայն երկու Գերմանիաների վերամիավորման ժամանակ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ին [3] և արդեն երկու անգամ ենթարկվել է ծավալուն փոփոխությունների՝ 2005 և 2015 թվականներին: Հանրաքվեներով ընդունված այդ փոփոխությունները Սահմանադրության մեջ մտցրել են նոր կարգավորումներ և ցույց են տալիս պետության գլխավոր օրենքի հասցեայ ընդունման իրավաքաղաքական անհեռատեսությունը, որը տիրում էր հանրապետությունում անցյալ դարի 90-ական թվականներին:

Թերևս լուծում չէին ստացել մի շարք հիմնախնդիրներ, այդ թվում՝ իշխանությունների

տարանջատումը, երբ գործադիր և օրենսդիր իշխանությունները կենտրոնացվում են մեկ անձի՝ նախագահի ձեռքում, կամ երբ Նախագահը կարող է իրականացնել Վարչապետի գործառույթները՝ վարել կառավարության նիստերը, վավերացնել դրա որոշումները: Լայն էին Նախագահի լիազորությունները, ընդհուպ նրա կամքից էր կախված Սահմանադրության *անփոփոխ* 1-ին և 2-րդ հոդվածների՝ ժողովրդավարության և իրավական պետության կառուցման սկզբունքների կենսագործումը: Նա կարող էր արձակել Ազգային ժողովը և ազատել վարչապետին [4]:

Սահմանադրությամբ ամրագրված խորհրդարանական կառավարման պայմաններում անվտանգային քաղաքականության ձևավորման վրա խորհրդարանի գործած ազդեցության համաշխարհային փորձի հաշվառմամբ [5], կարող ենք ասել, որ արդարացված էր ստեղծված համակարգը բարեփոխելու քաղաքական ուժերի ցանկությունը: Վերջիններս արտահայտվում էին «խորհրդարանական» կառավարման համակարգին անցնելու օգտին, որը, ըստ իրենց, սահմանափակելով պետության նախագահի լիազորությունները, կլուծեր պետության առջև ծառայած հետևյալ խնդիրները.

- ընտրական համակարգի բարեփոխում,
- իրատեսական ժողովրդավարության իրականացում,
- օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հստակ տարանջատում,
- նախագահական գործառույթների մի մասի փոխանցում վարչապետին:

Վարչապետի լիազորությունների ընդլայնումը, սակայն, հղի էր մի նոր վտանգով՝ գերվարչապետական կառավարման համակարգի ձևավորմամբ: Որպես արդյունք՝ կառավարման բոլոր լծակները շարունակում էին մնալ մեկ անձի ձեռքում, այս անգամ վարչապետի: Տարբերությունն այն է, որ այժմ Նախագահի փոխարեն գործադիր իշխանությունն է սկսում իր կամքը թելադրել օրենսդիր և դատական իշխանություններին, իսկ նման պայմաններում խոսք անգամ չի կարող լինել իշխանությունների հստակ տարանջատման և խորհրդարանական վերահսկողության մասին:

Վստահորեն կարող ենք պնդել, որ կառավարման նման համակարգում, երկրի Սահմանադրության անկատարությունը լուրջ պրոբլեմներ էր ստեղծել պետության ռազմական անվտանգության և պաշտպանության խնդիրների կատարման հարցերում: Բայց և այնպես, կառավարման լծակներն իր ձեռքում պահելու նպատակով 2015 թ. իշխող Հանրապետական կուսակցությունը գնաց այդ քայլին: Տեղի ունեցավ ՀՀ Սահմանադրության նոր՝ երկրորդ փոփոխությունը, որով հիմք դրվեց Հայաստանի

Հանրապետության կիսանախագահական կառավարման ձևից անցմանը դեպի խորհրդարանական ձևը:

2015 թվականին ՀՀ Սահմանադրությունը ենթարկվել է արմատական փոփոխությունների: Առաջին հայացքից ամեն ինչ թվում է հարթ, և գրված է հոգուտ քաղաքացու: Սակայն 3-րդ հոդվածի 2-րդ կետը ամրագրում է, որ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների հարգումն ու պաշտպանումը հանրային իշխանության պարտականություններն են», և անմիջապես հաջորդ հոդվածում սահմանվում է, որ պետական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հավասարակշռման հիման վրա, սակայն ոչ մի խոսք չկա այսպես կոչված հանրային իշխանության մասին [6]: Մինչդեռ անհրաժեշտ է նշել, որ *մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների հարգումն ու պաշտպանումը* պետության պարտականություններն են, ինչը պետք է իրականացվի իշխանության թվարկված երեք ճյուղերի միջոցով:

Մեր կարծիքով՝ 3-րդ հոդվածում նշված «հանրային իշխանություն» արտահայտությունը հակասում է Սահմանադրության տրամաբանությանը: Սահմանադրության 1-ին հոդվածում նշվում է, որ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: Արդյոք այստեղից հետևում է, որ հանրային իշխանությունը պետական իշխանությունն է, իսկ եթե ոչ, ապա Սահմանադրությունը պետական իշխանությունն առանձնացնում է հանրայինից՝ հակասելով 1-ին հոդվածին: Նման դրույթ նախկինում չկար:

2015 թ. սահմանադրական փոփոխությունները վերաբերում են առանց բացառության մինչ այդ գործող բոլոր գլուխներին: Ավելացել են նոր գլուխներ, հոդվածներ, հաճախ մի գլուխը կամ հոդվածը բաժանված է մի քանի կառուցվածքային մասերի: Օրինակ՝ 1995 թ. ՀՀ Սահմանադրության 1-ին և 2-րդ գլուխները պարունակում էին 48 հոդված. 1-ինը՝ 13, 2-րդը՝ 35: Ծիշտ է, 2005 թ. փոփոխություններով հոդվածների թիվը չի փոխվել, սակայն ընդարձակվել է դրանց բովանդակությունը, հատկապես՝ 2-րդ գլխի «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները» հատվածը: 2015 թ. սահմանադրական փոփոխություններն ավելի հեռուն են գնացել. 1-ին գլուխը 13 հոդվածի փոխարեն պարունակում է 22, իսկ 2-րդ գլուխը՝ 25 –ի փոխարեն 58, բացի այդ, ավելացել է վեց հոդվածներով և ս մեկ գլուխ՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները»:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական մակարդակում «գործառույթ-հաստատություն-լիազորություն» եռամիասնական շղթայում լիարժեք ներդաշնակության ապահովման գլխավոր հիմնավորմամբ 2015 թ. կատարվեցին սահմանադրական բարեփոխումներ, որոնց արդյունքը եղավ այն, որ Հայաստանն անցավ հանրապետության խորհրդարանական կառավարման մոդելին: Խորհրդարանական հանրապետությունում նախագահը կառավարության ղեկավարին և անդամներին նշանակում է դեյուրե (իսկ դեֆակտո այդ լիազորությամբ օժտված են խորհրդարանում (ստորին պալատում) ձայների մեծամասնությունը վայելող կուսակցությունն ու դրա առաջնորդը): Այս մոդելում նախագահի հիմնական գործառույթը հանրապետությունը ներկայացնելն է, միջազգային պայմանագրեր կնքելը կամ դրանց վավերացմանը մասնակցելը, իսկ օրենսդիր կամ գործադիր իշխանության իրականացման գործում որևէ փաստացի լիազորությունով օժտված չէ [7]:

Քանի որ 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը կիսանախագահական կառավարման ձևից խորհրդարանական ձևին անցման իրավական ակտն է, ապա դրա 4-րդ գլուխն արդեն վերաբերում է ոչ թե նախագահին, այլ Ազգային ժողովին, 5-րդ գլուխը՝ Հանրապետության նախագահին, և արդեն նոր՝ 6-րդ գլուխը՝ Կառավարությանը (նախկինում 5-րդ):

Հանրապետության բարձրագույն իշխանության այս եռակողմ կառավարման մեջ, չնայած ՀՀ կառավարությունն ի պաշտոնե, որպես գործադիր մարմին, երրորդն է, սակայն, վարչապետը, համաձայն իրեն տրված լիազորությունների, դառնում է պետական իշխանության գլխավոր անձը՝ հիմք դնելով կառավարման գերվարչապետական ձևին, թեև պետության գլուխը Հանրապետության նախագահն է, և նա է Սահմանադրության պահպանը [8]: Նա է նշանակում և ազատում երկրի բարձրաստիճան պաշտոնյաներին, ստորագրում կարևորագույն փաստաթղթերը: Բայց և այնպես պետության ներքին և արտաքին քաղաքականությունը մշակում և իրագործում է կառավարությունը [9]: Պետության բարձրաստիճան պաշտոնյաների առնչությամբ կադրային քաղաքականությունը, ռազմավարական նշանակության հիմնախնդիրները ՀՀ Նախագահը կարող է լուծել միայն ՀՀ վարչապետի ներկայացմամբ [10]: Բացի այդ, եթե ՀՀ Նախագահը իրեն ստորագրման համար ներկայացված ակտի վերաբերյալ ունի առարկություններ, կարող է այն եռօրյա ժամկետում վերադարձնել՝ իր առարկություններով: Եթե ՀՀ վարչապետը դրանք չի ընդունում, ապա ՀՀ Նախագահը պետք է ստորագրի այդ ակտը կամ, եթե

համարում է, որ այն հակասահմանադրական է, պետք է դիմի Սահմանադրական դատարան [11]:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ 2015 թ. սահմանադրական փոփոխություններից հետո, որոնք հանրապետությունը կիսանախագահական կառավարման համակարգից վերածել են խորհրդարանականի, ՀՀ նախագահը շարունակում է համարվել պետության գլուխ, սակայն, եթե նա նույնիսկ չհաստատի վարչապետի առաջարկությունները, այդուհանդերձ դրանք կստանան օրենքի ուժ [12]:

Անհրաժեշտ ենք համարում որոշ հոդվածների վերլուծությամբ դրանց վերաբերյալ ներկայացնել մի քանի բովանդակային դիտողություններ և առաջարկություններ, որոնք, ըստ մեզ, կբարելավեն պետության Հիմնական օրենքը և այն կհամապատասխանեցնեն իր 1-ին և 2-րդ հոդվածներում ամրագրված արժեքներին:

Այսպես. 3-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է. «...Մարդու անօտարելի արժանապատվությունը նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի մասն է»: Անձի արժանապատվությունը օտարելի լինել չի կարող: Արժանապատվությունը բարոյական կատեգորիա է, որը նշանակում է անձի նկատմամբ հարգանք և ինքնահարգանք: Այն մարդու անօտարելի հատկությունն է, որը պատկանում է նրան անկախ այն բանից, թե ինչպես են ինքը կամ իր շրջապատը գնահատում նրա անձը [13]: ՀՀ-ում մարդը և քաղաքացին չեն գտնվում ոչ՝ ճորտի, ոչ՝ ստրուկի կարգավիճակում, և բոլորը իրենց արժանապատվության, կյանքի ու ազատությունների տերն են: Առաջարկվում է այս դրույթի ձևակերպումից հանել «անօտարելի» բառը:

Նույն հոդվածի 2-րդ մասում կարդում ենք. «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են»: Մի կողմ թողնենք լեզուն: Ինչպես արդեն նշել ենք, ստացվում է, որ ժողովրդավարական երկրում ոչ թե պետությունն է մարդու համար երաշխիք, այլ մի երրորդ սուբյեկտ: Սահմանադրության նախորդ տարբերակներում այդ գործառույթը պատկանում էր պետությանը. «Պետությունը ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները ...» [14]: Մեր կարծիքով հոդվածի այս մասը պետք է խմբագրել հետևյալ տեսքով. «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների հարգումն ու պաշտպանությունը պետության պարտականություններն են»:

Ռազմական անվտանգության ապահովման և ինքնուրույն արտաքին քաղաքականության իրականացման հարցերի մասով 5-րդ հոդվածում կա լուրջ բացթողում: Այն է՝ եթե «ՀՀ

Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ», և բոլոր նորմատիվ իրավական ակտերը պետք է համապատասխանեն նրան, ապա 3-րդ կետում նշված է, որ վավերացված միջազգային պայմանագրերի հետ հակասության դեպքում կիրառվում են վերջինիս նորմերը: Տվյալ հոդվածում չի հստակեցվում, ավելի ճշգրիտ, չի նշվում, որ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել, ինչպես ամրագրված է 6-րդ հոդվածի 3-րդ մասում: Առաջարկում ենք վերանայել 3-րդ կետը և ամրագրել, որ միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել, եթե դրանք հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

8-րդ հոդվածում չկա նախկինում գործող հետևյալ դրույթը (հոդված 7, մաս 3). *«Կուսակցություններն ապահովում են իրենց ֆինանսական գործունեության հրապարակայնությունը»*: Մինչդեռ այս դրույթը՝ որպես պարտադիր նորմ, գործում է մինչև այժմ, այսինքն՝ Սահմանադրությանը հակառակ: Ըստ «Քաղաքական կուսակցությունների գործունեության իրավական կարգավորման մասին» Վենետիկյան հանձնաժողովի ընդունած դրույթների՝ հաշվետվողականության սկզբունքը ենթադրում է քաղաքական կուսակցությունների գործունեության մասին հաշվետվողությունների ներկայացում, կամ ֆինանսական գործունեության հրապարակայնություն [15]:

Հետևաբար այս սկզբունքը ամրագրված չլինելու դեպքում քաղաքական կուսակցությունները կարող են օրենսդրորեն ստանալ որոշակի առավելություններ այլ կազմակերպությունների նկատմամբ: Դա հատկապես ակնհայտ է, երբ խոսքը քաղաքական գործունեության ֆինանսավորման և ընտրարշավների ժամանակ ՉԼՄ-ների ռեսուրսներին հասանելիության մասին է:

Երկայիս Սահմանադրության մեջ այս դրույթի բացակայությունը, մեր կարծիքով, կարող է պետության համար ստեղծել լուրջ անվտանգային պրոբլեմներ, ուստի նպատակահարմար է վերականգնել նախկինում գործող այս դրույթը:

Թե՛ 2005 թ., թե՛ 2015 թ. փոփոխություններով 14-րդ հոդվածում նշվում է, որ զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն: Սակայն, կարծում ենք, պետք է տարանջատել ներքին և արտաքին քաղաքականությունները: Այո՛, ներքին քաղաքականության դեպքում չեզոքությունը պարտադիր պայման է, իսկ արտաքինի դեպքում ՉՈՒ-ն չի կարող լինել պետության անվտանգության երաշխիք, մանավանդ հայկական երկու պետությունների՝ ՀՀ և ԱՀ դեպքում: Բացի այդ, չմոռանանք, որ ինչպես ասում էր Կ. ֆոն Կլաուզեֆցն իր «Պատերազմի մասին»

աշխատությունում, պատերազմները քաղաքականության շարունակությունն են և ունեն քաղաքական նպատակ:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ ներկայիս Սահմանադրությամբ Չինված ուժերին առաջադրվող խնդիրների շարքում չկա միջազգային պարտավորությունների կատարման ապահովումը: Սակայն ՀՀ ՉՈՒ խաղաղապահ ստորաբաժանումները իրականացնում են խաղաղապահ առաքելություններ (կիրառվում են) ՀՀ տարածքից դուրս, ինչը ըստ սահմանադրության ներկա բովանդակության հակասահմանադրական է: Մեր կարծիքով անհրաժեշտ է ՀՀ Սահմանադրության հոդված 14 - ի առաջին մասը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերը մասնակցում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության, անվտանգության, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության ապահովմանը և զինված ուժերի կիրառման մասով ստանձնած միջազգային պայմանագրերի կատարմանը»:

Այստեղ կարող ենք նշել, որ ՀՀ անվտանգության ապահովումը բավական լայն կատեգորիա է, որպեսզի դասվի զինված ուժերի նպատակների շարքը: Այսպես. ՀՀ պաշտպանության ապահովումը՝ որպես զինված ուժերի խնդրի ուսումնասիրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ եթե «պաշտպանություն» հասկացությունը դիտարկենք որպես ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների ամբողջություն, ապա դժվար է պատկերացնել, թե ինչպես պետք է զինված ուժերն ապահովեն քաղաքական կամ տնտեսական միջոցառումների իրականացումը [16]: Նրանք կոչված են ապահովելու պաշտպանության միայն մեկ հատվածի՝ ռազմական միջոցառումների իրականացումը:

Այսպես. «Սահմանադրությունը երկրի պաշտպանությունն անուղղակիորեն ճանաչում է որպես պետության կարևորագույն արտաքին գործառնություն: Այդ գործառնությունը քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ միջոցների համակարգ է, որի նպատակն է պատրաստել պետությունը պաշտպանությանը...: Պաշտպանական համակարգի ձևավորման ու կայացման գործում էական դեր է խաղում պետական իշխանության ամբողջ համակարգը: Սակայն այդ համակարգում գլխավորը Չինված ուժերն են» [17]:

Ըստ 118-րդ հոդվածի 1-ին կետի («Պատերազմի հայտարարում և խաղաղության հաստատում»)՝ ԱԺ-ն կարող է ընդունել պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն

հաստատելու որոշում: Նույն հոդվածի 2-րդ կետում նշվում է, որ ԱԺ նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է Կառավարությունը:

Ամենևին հասկանալի չէ, թե ինչ է նշանակում *պատերազմ հայտարարելու հարց, որը լուծում է Կառավարությունը*, և ինչու է այս կետում բացակայում խաղաղություն հաստատելու հարցը, քանի որ Կառավարությունը չունի պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու գործառույթ: Ուստի անհրաժեշտ ենք համարում այն ավելացնել և համապատասխանեցնել 118-րդ հոդվածին:

119-րդ հոդվածի 3-րդ կետում միանշանակ կերպով ասվում է, որ «Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել ռազմական դրությունը կամ չեղյալ հայտարարել ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը»: Սահմանադրությունը որևէ կերպ չի արձարձում ռազմական դրության հայտարարման հանգամանքներում ԱԺ հատուկ նիստ գումարելու անհնարինության հարցը: Նման իրավիճակ միանգամայն հնարավոր է, և դա պետության համար օրենսդիր մարմնի գործունեության անհնարին լինելու պայմաններում ազգային անվտանգության համար կառաջացնի լրջագույն վտանգ: Պետք է նշել նաև, որ ԱԺ հատուկ նիստի գումարումը Կառավարության լիազորությունների իրականացման նկատմամբ խորհրդարանի վերահսկողության ձևերից մեկն է: Սահմանադրության 118-րդ հոդվածը ԱԺ նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցի լուծումը բացառության կարգով վերապահում է Կառավարությանը, ուստի օբյեկտիվորեն հնարավոր է համարում այնպիսի կրիտիկական պահերի գոյությունը, երբ ԱԺ նիստ հնարավոր չէ գումարել, սակայն ռազմական դրություն հայտարարելու մեկ այլ դեպքում նման բացառություն չի սահմանում: Մինչդեռ, ինչպես պատերազմ հայտարարելու, այնպես էլ այլ հիմքերով զինված ուժերի կիրառման համար կամ ռազմական դրության հայտարարման դեպքում, ԱԺ նիստ գումարելու անհնարինության պարագայում, կառավարությանը ինքնուրույնաբար գործելու հնարավորություն ընձեռելը կենսական անհրաժեշտություն է: Սա, անշուշտ, էական բացթողում է, քանի որ հստակ է դարձնում պետության համար կենսական անհրաժեշտություն ներկայացնող գործողությունների իրավաստությունը:

ՀՀ Սահմանադրության առաջին երեք գլուխների համեմատական վերլուծությունը արտացոլում է ընդհանուր պատկերը, ուստի անհրաժեշտ չենք համարում նույն կերպ

ներկայացնել մյուս գլուխների ու հոդվածների վերլուծությունը: Կարող ենք միայն նշել մի քանի լուրջ փոփոխություններ ու համապատասխան առաջարկություններ և սահմանափակվել դրանով:

Անհրաժեշտ ենք համարում նաև արձարձել ՀՀ Նախագահին ու Պաշտպանության նախարարին վերաբերող մասերի հարցը:

ՀՀ Նախագահը, համաձայն 132-րդ հոդվածի, կարող է միջազգային պայմանագրեր կնքել միայն կառավարության առաջարկությամբ, բայց նույն հոդվածի 2-րդ կետով Նախագահը վարչապետի առաջարկությամբ օրենքով սահմանված դեպքերում և կարգով հաստատում, կասեցնում կամ չեղյալ է համարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը: Այսպիսով՝ եթե կառավարությունը չառաջարկի, նշանակում է պետության գլուխը միջազգային հանդիպումների ժամանակ չի կարող կնքել պայմանագրեր: Կարծում ենք՝ հոդվածի 2-րդ կետը առհասարակ պետք է հանել:

149-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերով Նախագահը անհապաղ վարչապետ է նշանակում ԱԺ-ի ընտրած թեկնածուին: Սա նշանակում է, որ Նախագահը՝ պետության գլուխը, գործադիր մարմնի ղեկավար նշանակելիս պարտավոր է կատարելու ուրիշների թելադրանքը՝ գուցե և իր կամքին հակառակ: Մի՞թե դա պետության ղեկավարի իրավունքների անտրամաբանական սահմանափակում չէ և չի հակասում 123-րդ հոդվածին:

Սահմանադրության 155-րդ հոդվածում խիստ նվազեցված են ոչ միայն Նախագահի, այլև Պաշտպանության նախարարի լիազորությունները: Ինչպես հասկանալ, որ խաղաղ ժամանակ զինված ուժերի կառավարումն իրականացնող պաշտոնատար անձինք պատերազմական ժամանակ լիազորություններից զրկվում են: Բացի այդ, զինված ուժերը միայն պաշտպանության նախարարության զորքերը չեն, այլև մյուս զորքերն են, որոնք գտնվում են տարբեր գերատեսչությունների ենթակայության ներքո: Թե ինչ լիազորություններ ունեն դրանց ղեկավարները՝ նույնպես անտեսված է: Դիմենք 155 հոդվածին:

Կետ 1. Որն է այն անհետաձգելի անհրաժեշտությունը, որի դեպքում Պաշտպանության նախարարը Վարչապետին կառաջարկի կիրառել զինված ուժերը: Եթե դա ծագել է պետության ներսում, ապա համաձայն Սահմանադրության՝ բանակը պետք է չեզոք դիրք գրավի, իսկ ներքին քաղաքականությանը կարող են միջամտել Ոստիկանության ներքին զորքերը՝ ոստիկանապետի որոշմամբ: Արտաքին վտանգի դեպքում զորքերը պետք է գործեն Պաշտպանության նախարարի հրահանգներով, իսկ պատե-

րազմական ժամանակ նախարարը լիազորություններից զուրկ անձ է: Հետևաբար ակնհայտ է դառնում, որ 1-ին կետն անկատար է: Նույն այդ կետում վարչապետը որոշում կայացնելուց հետո այդ մասին տեղեկացնում է միայն կառավարության անդամներին՝ անտեսելով պետության նախագահին, որը վարչապետի առաջարկությամբ պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է գործերի գլխավոր հրամանատարին: Կամ մի՞թե անտրամաբանական չէ, որ Պաշտպանության նախարարը, կնքելով տարբեր մակարդակի միջազգային պայմանագրեր, իրավասու չէ դրանց կիրառման համար, թեև նա պատերազմին ՉՈՒԲ-ի պատրաստման համար պատասխանատու անձ է: Դեռ ավելին. Պատերազմական ժամանակ նրանց գործառույթներն զգալիորեն սահմանափակվում են: Հարց է առաջանում, թե զինված առնակատման ժամանակ, ինչպիսին ապրիլյան քառօրյան էր, դրանք նույնպես պետք է սահմանափակվեն: Կարծում ենք, որ Գլխավոր շտաբի պետը բոլոր դեպքերում պետք է լինի Պաշտպանության նախարարի ենթակայության տակ:

Չորքերի միանձնյա ղեկավարության սկզբունքը երկատելը հղի է վտանգավոր հետևանքներով: ՈԲստի նպատակահարմար է 155-րդ հոդվածում ամրագրել երկու հիմնական դրույթ.

ա) Վարչապետն իր գործողությունները համաձայնեցնում է Նախագահի հետ,

բ) ուժային կառույցների՝ մյուս գործերի, ղեկավարները զինված բախումների և պատերազմի ժամանակ գործերի կառավարման և կիրառման դեպքում ենթակա են Պաշտպանության նախարարին կամ՝ այդ գործերն անցնում են Պաշտպանության նախարարի տրամադրության տակ:

Կարծում ենք, որ դրանց ուժեղացման նպատակով պետք է վերանայել ՀՀ Նախագահի և Պաշտպանության նախարարի սահմանադրական լիազորությունները՝ Հայաստանի Հանրապետության կառավարման գործում բարձրացնելով այդ պաշտոնատար անձանց՝ որպես պետության անվտանգության երաշխավորների դերը:

Դիտարկելով ՀՀ Սահմանադրության 2015 թ. փոփոխությունները՝ մենք հիմնականում կանգ առանք Սահմանադրության առաջին երեք գլուխներում արված փոփոխությունների վրա, տվեցինք դրանց մեկնաբանությունները և ներկայացնենք ըստ մեզ՝ անհրաժեշտ շտկումները: Ցույց տվեցինք նաև պետության Նախագահի, Ազգային ժողովի ու Պաշտպանության նախարարի սահմանադրական լիազորությունների պաշտոնեական անհամապատասխանությունները, Վարչապետի գործառույթների անտրամաբանական ընդլայնումը: Պետք է

հաշվի առնել և չմոռանալ, որ գործադիր մարմինը միշտ էլ ենթակա է եղել օրենսդիր մարմնին և Նախագահին: Նրանք են ընտրում և նշանակում Վարչապետին, որը պարբերաբար հաշվետու է լինում կառավարության կատարած աշխատանքների համար: Սակայն ստեղծված պայմաններում գործադիր մարմինը՝ հանձին Վարչապետի, ինքն է ծրագրում և իր խորհրդարանական մեծամասնության միջոցով ընդունում որոշումներ և ինքն է ներկայացնում Նախագահին՝ քողարկված կերպով պարտադրելով ստորագրել իր որոշումները: Հակառակ դեպքում իր ծրագրածն ուժի մեջ կմտնի առանց Նախագահի ստորագրության:

Իշխանության բաժանման սկզբունքի իմաստն առաջին հերթին ոչ թե գործառույթների սահմանափակումն է, այլ ամբողջ իշխանությունը մեկ ճյուղում կենտրոնանալու, դրա մենաշնորհային իշխանությունը հաստատելու հնարավորության բացառումն է [18]:

Սահմանադրական փոփոխությունների սույն վերլուծությունը, մեր կարծիքով, ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետության համար ներկայիս կառավարման՝ խորհրդարանական կոչվող գերվարչապետական համակարգը իրեն չի արդարացնում, քանի որ չի նպաստում օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների իրական տարանջատմանը, ուստի և, իրավական պետության կառուցմանը, ինչպես նաև բացասաբար է ազդում պետության պաշտպանունակության և ռազմական անվտանգության սպահովման մակարդակի վրա:

Սույն թվականի սեպտեմբերի 27-ին հանցավոր ադրբեջանական իշխանությունը Թուրքիայի աջակցությամբ սանձազերծեց հայկական երկու հանրապետությունների դեմ նոր պատերազմ: Ակտիվ մարտական գործողություններ սկսվեցին արցախյան և ադրբեջանական զինված ուժերի շփման ամբողջ երկայնքով, հակառակորդը կիրառեց իր սպառազինության մեջ եղած բոլոր զինատեսակները, ինչպես նաև Թուրքիայի միջոցով Սիրիայից տեղափոխված ահաբեկչական խմբավորումները: Պատերազմ էր մղվում ոչ միայն հայկական զինված ուժերի, այլև խաղաղ բնակչության դեմ, ինչը միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտում է [19]:

Ղարաբաղյան հակամարտության այս զարգացումները ևս մեկ անգամ շեշտում են Հայաստանի համար պաշտպանությանը պետության պատրաստման կենսական կարևորությունը: Այն պետք է խարսխվի ամուր իրավական հիմքի վրա, որի հենասյունն է Սահմանադրությունը: Վերը ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները, իհարկե, սպառիչ չեն և տեսական հետազո-

տության արդյունք են: Ինչ վերաբերում է բուն կիրառական կողմին, ապա անհրաժեշտ են մասնագիտական խմբերի, հանձնաժողովների եզրակացությունները, որոնց հիման վրա կձևավորվի նոր սահմանադրական բարեփոխումների փաթեթը:

Գրականության և օգտագործված նյութերի հղումներ

1. «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 10: Ե., 1984, էջ 143:
2. «Конституция Соединенных Штатов Америки» (https://www.constitutionfacts.com/content/constitution/files/USConstitution_Russian.pdf):
3. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», 05.07.1995 (<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1>):
4. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով)», 27.11.2005, հոդ. 55, կետ 3–4 (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75780>):
5. **Теодора Фуйор.** Полномочия парламента и управление сектором безопасности. Женева, 2014, сс. 11–12:
6. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն փոփոխություններով», 06.12.2015, հոդ. 4 (<https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>):
7. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք»: Խմբ. Ն. Ա. Այվազյան: Ե., 2008, էջ 410:
8. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն փոփոխություններով», 06.12.2015, հոդ. 123, կետ 1–2 (<https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>):
9. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն փոփոխություններով», 06.12.2015, հոդ. 146, կետ 2:
10. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն փոփոխություններով», 06.12.2015, հոդ. 131–134:
11. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն փոփոխություններով», 06.12.2015, հոդ. 139, կետ 2:
12. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն փոփոխություններով», 06.12.2015, հոդ. 139, կետ 3:
13. «Большой юридический словарь». Под ред. А. Я. Сухарева. М., 2007., с. 163:
14. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով)», 27.11.2005, հոդ. 3 (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75780>):
15. «Положения о правовом регулировании деятельности политических партий». Принято Венецианской комиссией на 84-ом пленарном заседании (г. Венеция, 15-16 октября 2010 г.). Страсбург, 25 октября 2010, принцип 10 ([https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)024-rus](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)024-rus)):
16. ՀՀ 2017 թ. նոյեմբերի 29-ի «Պաշտպանության մասին» հմ. ՀՕ-196-Ն օրենքը (www.arlis.am/documentview.aspx?docid=117631):
17. **Վաղարշյան, Ա. Գ.** Հայաստանի երեք հանրապետություններում սահմանադրական կարգավորման տիպերը և զինված ուժերի քաղաքական չեզոքության ու դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների սահմանադրաիրավական ամրագրումը: «ՀԲ», 2010, հմ. 2:
18. **Барциц, И.** Система государственного и муниципального управления. – М., 2019, с. 121:
19. «Дополнительный протокол к Женевским конвенциям от 12 августа 1949 года, касающийся защиты жертв международных вооруженных конфликтов (Протокол I)», «Дополнительный протокол к Женевским конвенциям от 12 августа 1949 года, касающийся защиты жертв вооруженных конфликтов международного характера (Протокол II)». «Сборник международных договоров», т. I (часть вторая): «Универсальные договоры». Организация объединенных наций. Нью-Йорк и Женева, 1994, сс. 1063–1065, 1128:

*Сдана/Հանձնվել է՝ 25.11.2020
 Рецензирована/Գրախոսվել է՝ 27.11.2020
 Принята/Ընդունվել է՝ 30.11.2020*